

ՄԵԼՔՈՆՅԱՆ Ի. Մ.

Առկայացումը քերականական կարգ է, որն արտահայտում է առարկայի առկայացական հարաբերությունը խոսքի մասնակիցների՝ հաղորդակցվողների նկատմամբ<sup>1</sup>: Սրան հակադրվում է անառկայացման կարգը, որը ենթադրում է այդպիսի հարաբերությունների բացակայությունը: Լեզվի մեջ առկայացման կարգը դրսևորվում է բառայնորեն կամ քերականորեն, երբեմն էլ՝ մնում արտակառուցվածքային ոլորտում: «Առկայացում»(ռուս.՝ **детерминация**, անգլ.՝ **determination**) եզրույթը լեզվաբանության մեջ երկակիորեն է ընկալվում: Այն, նախ, անվանում է լեզվական միավորների անցումը լեզվի պլանից խոսքի պլան, երկրորդ՝ նշում է գոյականի որոշյալության և անորոշության իմաստներն արտահայտող քերականական կարգը: Առաջին ըմբռնումը ուղղակիորեն կապված է կառուցվածքային լեզվաբանության համար արմատական նշանակություն ունեցող «լեզու-խոսք» տարբերակման հետ: Երկրորդ ըմբռնման հիմքում գոյականի որոշյալության և անորոշության քերականական իմաստներն են<sup>2</sup>:

Այսպիսով, «առկայացում» եզրը լեզվաբանության մեջ ոչ միայն նշանակում է լեզվական միավորի անցումը լեզվից խոսք, այլ նաև օգտագործվում է գոյականի տարրորոշումը նշելու նպատակով: Հետևաբար, «առկայացման» վերոնշյալ եզրույթները սերտորեն փոխկապակցված են:

Լեզվի բառապաշարում գոյականները նշում են միայն ընդհանուր, վերացական հասկացություններ: Հաղորդակցության գործընթացում այդ գոյականները խոսքաշարում զբաղեցնում են շարադասությամբ նախատեսված իրենց տեղը: Այդ դեպքում դրանք մտնում են շարակարգային պլան: Լեզվի միավորը առկայացմամբ անցնում է խոսքին: Այսինքն՝ առկայացման շնորհիվ վերացական և ընդհանուր հասկացությունը դառնում է իրական առարկա: Այսպիսով, «առկա-յացում» հասկացությունը նշանակում է ոչ միայն լեզվի պլանից անցում խոսքի պլանին, այլ նաև վերացականից՝ իրականին: «Լեզվի և խոսքի փոխհարաբերությունը,- գրում է ակադ. Գ. Ջահուկյանը,- կարելի է համեմատել մեքենայի վիճակի՝ որպես հնարավորության և նրա գործողության՝ որպես իրականության հետ: Լեզուն գոյություն ունի հիշողության մեջ: Լեզվի միավորները միջնորդավորված են, վերացարկված և ոչ իրավիճակային, խոսքի միավորները անմիջական են, կոնկրետ և իրավիճակային»<sup>3</sup>:

<sup>1</sup> Տե՛ս Պետրոսյան Հ., Հայերենագիտական բառարան, Ե., 1987, էջ 50:

<sup>2</sup> Տե՛ս Բաղդասարյան Ա., Գոյականական առկայացման հարցեր, Ե., 2004, էջ 6:

<sup>3</sup> Джаукян Г. Универсальная теория языка: пролегомены к субстанциональной лингвистике, М., 1999, с. 14.

Լեզվի բուն էությունից է բխում գոյականի և՛ ընդհանուր, և՛ մասնավոր նշանակությունը: Հետևաբար, կարող ենք ասել, որ որոշյալի ու անորոշի քերականական կարգը առաջացել ու զարգացել է բառի ընդհանուր ու մասնավոր իմաստների փոխհարաբերության հիմքի վրա:

Հայ լեզվաբանության մեջ առկայացման՝ որպես լեզվից խոսքին անցման բնութագիր կարող է ծառայել ակադեմիկոս Է. Աթայանի հետևյալ միտքը. «Բառը, որպես լեզվական երգոնի հարաբերականորեն կոնկրետ միավոր, ամբողջապես վիրտուալ է և իր կայունությամբ անցյալին վերաբերում է որպես արդյունք, իսկ ապագային՝ որպես հնարավորություն. լեզվի բառային դաշտերում բյուրեղացած է անցած խոսքային ակտերում արտացոլված և ընդհանրական աստիճանի հասցված իրականությունը, մինչդեռ արտահայտման գործառույթն առկա է որպես հնարավորություն ու միտում»<sup>4</sup>:

Գոյականի առկայացական կարգը հաղորդակցական է: Հետևաբար, այդ կարգի մասին կարելի է խոսել միայն հաղորդակցության գործընթացում, նախադասությունների սահմաններում: Այսինքն՝ երբ գոյականը հանդես է գալիս ոչ թե անկախ՝ որևէ ասույթից և համատեքստից դուրս, այլ միայն դրանց մեջ ընդգրկվելու դեպքում: «Առկայացման լեզվական միավորները նշում են իրականության այն առարկան, որի հետ վերաբերական հարաբերություն են ունենում: Վերաբերությունը առարկայացած, խոսքում ընդգրկված անվան կամ անվանական խմբի հարաբերությունն է իրականության առարկաների հետ»<sup>5</sup>: Այսինքն՝ ելնելով լեզվի բուն կոչումից՝ հաղորդակցական դերից, հաղորդակցության գործընթացում պետք է պարզել, թե խոսքը ինչի մասին է՝ տվյալ տեսակի մասին ընդհանրապես, թե՞ տվյալ տեսակի մեջ մտնող մասնակի առարկայի մասին: Ինչ վերաբերում է մասնակի առարկային, ապա այս պարագայում էլ պետք է ճշտել, թե հատկապես որի մասին է խոսքը:

Հայ լեզվաբանական գրականության մեջ «առկայացում» եզրով նշվում է գոյականի որոշյալությունը և անորոշություն արտահայտող քերականական կարգը: Դրա գիտական հիմնավորումն առաջին անգամ տվել է Գ. Ջահուկյանը<sup>6</sup>: Լեզվաբանների մի խումբ առկայացման քերականական կարգը հայերենում անվանում է նաև «տարորոշում» եզրով<sup>7</sup>:

Լեզվից խոսքին անցնելով՝ բոլոր բառերը առկայանում են: Բայց դրանց մի մասն է միայն, որ առկայացումն արտահայտելու համար համապատասխան նշաններ ունի: Այսպիսով, առկայացումը տարբեր

<sup>4</sup> Атаян Э. Аспекты организации и функционирования языковой сферы, Е., 1976, с. 75.

<sup>5</sup> Арутюнова Н. Лингвистические проблемы референции (Новое в зарубежной лингвистике, М., 1982, с. 6).

<sup>6</sup> Տե՛ս Գահուկյան Գ., Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Ե., 1969, էջ 184-188:

<sup>7</sup> Տե՛ս Աբրահամյան Ս., Պառնասյան Ն., Օհանյան Հ., Ժամանակակից հայոց լեզու, Ե., 1974, էջ 106, Աբրահամյան Ս., Ժամանակակից գրական հայերեն, Ե., 1981, էջ 159:

լեզուներում կարող է իրականանալ այս կամ այն խոսքի մասին բնորոշ համադրական կամ վերլուծական ձևայինների միջոցով: Առկայացումը՝ որպես գոյականի տարրորոշման արտահայտություն, դրսևորվում է որոշյալության և անորոշության ցուցիչների միջոցով, որոնք տարբեր լեզուներում կարող են տարբեր լինել՝ հոդ, ցուցական, անորոշ, ստացական, քանական, անձնական, հարցական դերանուններ, հոլով և այլն: Որոշյալի և անորոշի իմաստներն ու դրանց քերականական արտահայտության միջոցները յուրաքանչյուր լեզվի մեջ ունեն առանձնահատուկ դրսևորումներ, որոնք պայմանավորված են տվյալ լեզվի պատմական զարգացմամբ:

Առկայացման քերականական արտահայտության միջոցները հոդերն են: Շատ լեզուներում հոդերն արտահայտում են ոչ միայն որոշյալի կամ անորոշի քերականական իմաստներ, այլև գոյականին հատուկ այլ քերականական կարգեր՝ թիվ, հոլով և սեռ: Օրինակ՝ գերմաներենում *der, die, das, ein, eine* հոդերը համապատասխանաբար արտահայտում են թվի, սեռի և հոլովական վերջավորությունների իմաստներ: Հունարենի որոշիչ հոդին (*ο, η, το*) հատուկ են թվի, հոլովի և սեռի, իսկ անորոշ հոդին (*ένας, μια, ένα*)՝ հոլովի ու սեռի քերականական կարգեր: Հոդերը հանդես են գալիս երկու տարբերակով՝ *οδանդակ բառերի և բառին կցվող մասնիկների միջոցով (օրինակ՝ հայերենում):* Դրանք կարող են բառին կցվել վերջից (*հայերենում, այբաներենում, ռումիներենում, թուրքերենում*) կամ հանդես գալ՝ նախադասվելով բառին (*անգլերենում, գերմաներենում, ֆրանսերենում, հունարենում և այլ լեզուներում*):

Հայերենում քերականական առկայացումը իրականացվում է հոդերով, այդ իսկ պատճառով այն հայտնի է նաև հոդային առում կամ հոդի կարգ (*категория артикля*) բնորոշումով: «Հոդ կոչվում են այն բառերը, որոնք նշում են բառերի այս կամ այն քերականական իմաստը, կոնկրետացնում բառիմաստը կամ կոնկրետացնում նրանց խոսքիմասային իմաստը»<sup>8</sup>: Այսպիսով, հոդերը քերականական միջոցներ են, որոնք կոնկրետացնում և առարկայական վերաբերությամբ են օժտում բառիմաստը:

Առկայացման և անառկայացման կամ որոշյալի ու անորոշի քերականական կարգը բնորոշ է հնդեվրոպական և ոչ հնդեվրոպական բազմաթիվ լեզուների՝ օրինակ՝ գերմաներենին, անգլերենին, ֆրանսերենին, իտալերենին, իսպաներենին, արաբերենին, թուրքերենին, հունարենին և այլն: Այս քերականական կարգը, որոշ ընդհանրություններ ունենալով հանդերձ, տարբեր լեզուներում տարբեր է, և յուրաքանչյուր լեզու ունի միայն իրեն հատուկ ձևային, իմաստային ու կիրառական առանձնահատկություններ:

Ե՛վ հայերենին, և՛ անգլերենին բնորոշ է առկայացման քերականական կարգը, որը երկու լեզուներում էլ արտահայտվում է հոդերի միջոցով: Պատկանելով հնդեվրոպական լեզվաընտանիքին և ունենալով հոդերի ընդհանուր համակարգ՝ հայերենը և անգլերենը, ընդհանրություններից բացի, հանդես են բերում նաև մի շարք

<sup>8</sup> Տե՛ս Աղայան Է., Լեզվաբանության ներածություն, Ե., 1967, էջ 399:

առանձնահատկություններ ու էական տարբերություններ: Անգլերենի և հայերենի հոդերի համակարգերի գուգադրական ուսումնասիրությունը բավական հետաքրքիր է ձևախմբային ու գործառական տեսանկյունից:

Խոսելով հայերենում և անգլերենում առկայացման քերականական կարգի մասին՝ պետք է նշել, որ երկու լեզուներում էլ, անկախ համադրական կամ վերլուծական միջոցներով արտահայտված լինելուց, այն գոյականի քերականական կարգերից մեկն է, որը սերտորեն կապված է հոդերի գործածության հետ: Ե՛վ հայերենում, և՛ անգլերենում գոյականների որոշյալ ու անորոշ իմաստներն արտահայտվում են որոշիչ և անորոշ հոդերով: Հոդի արտահայտած որոշյալ և անորոշ իմաստները ցույց են տալիս հաղորդակցման ակտի մասնակիցների վերաբերմունքը առարկաների ու երևույթների նկատմամբ: Դրանք նշում են՝ խոսքն արդյոք լսողին հայտնի՞, թե՞ անհայտ առարկայի մասին է: «Հոդը սպասարկու բառ է, որը գործածվում է գոյականի իմաստը ճշգրտելու համար»<sup>9</sup>: Հետևաբար, երկու լեզուներում էլ հոդը բառիմաստի կոնկրետացման, բառիմաստն առարկայական վերաբերությամբ օժտող քերականական միջոց է: Կարող ենք ասել, որ տարբերակելով խոսակիցներին հայտնի առարկան անհայտից՝ հոդերն իրենց արտահայտած իմաստներով նույնն են և՛ հայերենում, և՛ անգլերենում:

Անգլերեն հոդերը, լինելով գոյականի ամենարնդհանուր առկայացուցիչները, միաժամանակ նաև դրա ամենարնորոշ ցուցիչներն են և վերլուծաբար արտահայտված լինելով՝ նշում են միայն գոյականի անորոշի և որոշյալի քերականական կարգը, ինչպես հայերենում: Օրինակ՝ Mrs Glegg left the room and her husband followed her<sup>10</sup> (Տիկին Գլեգը լքեց սենյակը, և նրա ամուսինը հետևեց նրան): He wrote a letter to his father<sup>11</sup> (Նա նամակ գրեց իր հորը): Անգլերենում հոդի գործածության կանոնները ավելի դյուրին են, քան գերմաներենում և ֆրանսերենում, քանի որ այն չի փոխվում ոչ հոլովներով, ոչ թվով, և ոչ էլ սեռի հետ կապված<sup>12</sup>:

Առկայացումը հայերենում ներկայանում է չորս տարբերակով՝ ցուցական, դիմորոշ, ստացական, որոշյալ առումներ: Ըստ այդմ էլ առանձնացվում են ցուցական, դիմորոշ, ստացական և որոշյալ հոդեր: «Վերադրի և իր անվան համաձայնությունը լինում է գլխավորապես ս, դ, ը (ն) հոդերով, որոնք գործ են ածվում դիմորոշ, ցուցական կամ ստացական նշանակությամբ, իսկ ը (ն) հոդը, որ կոչվում է որոշող հոդ և ստանում է հաճախ ստացական նշանակություն...»<sup>13</sup>: Հայերենում գոյականի առկայացման կարգի ներսում ակադ. Գ. Ջահուկյանն առանձնացնում է երկու ենթակարգ՝ որոշյալություն և

<sup>9</sup> Thomson A., Martinet A. *A Practical English Grammar*, Oxford University Press, 1986, p. 15-16.

<sup>10</sup> *St u Eliot G. The Mill on the Floss*, Macmillan, 2005, p. 14.

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 56:

<sup>12</sup> *St u Петрова А. Самоучитель английского языка*, М., 2000, с. 15.

<sup>13</sup> Արեղյան Մ., *Հայոց լեզվի տեսություն*, Ե., 1965, էջ 518:

ցուցաստացականություն: Որոշյալության ենթակարգն արտահայտվում է անորոշ 0/մի և որոշիչ ը/ն հոդերի միջոցով, ընդ որում, անորոշ մի հոդի միջոցով անորոշությունը ուժեղացվում է, իսկ ինչ վերաբերում է ը/ն որոշիչ հոդերին, ապա դրանք դիրքային տարբերակներ են. ն-ն սովորաբար հանդիպում է ձայնավորից, իսկ ը-ն՝ բաղաձայնից հետո: Որոշյալության ենթակարգը արտահայտության պլանում բնորոշվում է ը և ն հոդերի օգնությամբ և սրա հետ կապված՝ 0/ը և 0/ն հակադրություններով<sup>14</sup>: Անորոշության ենթակարգը արտահայտվում է 0 և մի, իսկ արևմտահայերենում՝ մը (մըն) հոդերի օգնությամբ, հետևաբար, արտահայտության պլանում՝ 0/մի, արևմտահայերենում՝ 0/մը (մըն) հակադրությամբ: Այսպիսով, որոշյալի քերականական կարգը ժամանակակից հայերենում դրսևորվում է ն կամ ը հոդերի միջոցով, որոնց հակադրվում են առանց հոդի կամ «գրո»՝ 0 և մի ձևերը, որոնք արտահայտում են անառկայացման կամ անորոշի քերականական կարգը: Հայերենի առանձնահատկություններից է նաև այն, որ ն/ը որոշիչ հոդը, որպես կանոն, գործածվում է միայն ուղղական և սեռական-տրական հոլովների հետ: Այսպիսով, սեռական-տրական, բացառական, գործիական և ներգոյական հոլովներում որոշյալություն/անորոշություն հակադրությունը չեզոքանում է՝ պայմանավորված այն փաստով, որ նշված հոլովներով օգտագործվում են խոսողին արդեն հայտնի գոյականներ:

Անգլերենը տարբերակում է հոդի երկու տեսակ՝ որոշյալ և անորոշ: Որոշյալ առան քերականական կարգը դրսևորվում է the [ðə], [ði:], իսկ անորոշ առումը՝ a (an) [ə] [ən] հոդերի միջոցով: Ի տարբերություն հայերենի՝ անգլերենում հոդերը նախադասվում են գոյականներին և արտահայտվում են վերլուծականորեն: Եթե հայերենում որոշիչ հոդերը բնորոշվում են գործածության ոլորտի տարբերությամբ (այն է՝ ձայնավորով վերջացող բառերը ստանում են ն, իսկ բաղաձայնով վերջացողները՝ ը հոդը), ապա անգլերենում նման տարբերակում չկա: Հայերենում կապակցված խոսքում բաղաձայնահանգ բառերի ը հոդը կարող է փոխվել ն-ի, եթե հաջորդ բառն սկսվում է ձայնավորով: Այս պարագայում ն հոդը արտասանությամբ միանում է հաջորդ բառին, և երկու բառի մեջ դադար չի լինում, ու դրանք արտասանվում են միասին: Դրա հետևանքով արտասանության ժամանակ տրամաբանական շեշտը ընկնում է երկրորդ բառի վրա: Անգլերենում the որոշիչ հոդը բնորոշվում է զուտ արտասանական տարբերությամբ: Բաղաձայնով սկսվող գոյականներից առաջ the որոշիչ հոդն արտասանվում է [ðə], օրինակ՝ the flower [ðə'flaʊə] – ծաղիկը, the sofa [ðə'soufə] – բազմոցը, the lion [ðə'laɪən] – առյուծը և այլն, իսկ ձայնավորով սկսվող գոյականներից

<sup>14</sup> Տե՛ս Զառուկյան Գ., Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Ե., 1969, էջ 184-185:

Առաջ [ði:], օրինակ՝ the apple [ðiː æpl] – խնձորը, the embassy [ðiː embəsi] – դեսպանատունը, the island [ðiː aɪlənd] – կղզին և այլն: Հայերենում որոշիչ հոդը առաջացել է ցուցական դերանուններից, անգլերենում՝ that ցուցական դերանունից<sup>15</sup>: Ա. Թոմսոնը, անդրադառնալով հայերենի որոշիչ հոդին, գրում է, որ այն առաջացել է ցուցական դերանուններից, չունի սեռի, հոլովի, թվի քերականական իմաստներն արտահայտող գործառույթ, ինչպես անգլերենի the հոդը<sup>16</sup>: Այն գործածվում է ինչպես հաշվելի, նույնպես և անհաշվելի գոյականների հետ՝ առանձնացնելով տվյալ առարկան միատեսակ առարկաների խմբից, երբ առարկան հայտնի է թե՛ խոսողին, թե՛ լսողին: Օրինակ՝ Please close **the door** (Խնդրում եմ դուռը փակելք), Put **the book** on the table (Գիրքը դրեք սեղանին): **The** որոշիչ հոդը գոյականների հետ գործածվում է և՛ եզակի, և՛ հոգնակի թվով: Այդ հոդը նախադասության մեջ չի շեշտվում, ինչի հետևանքով էլ չի առանձնացվում և կարդացվում է հաջորդող բառի հետ միաձույլ: Օրինակ՝ the plate [ðəˈpleit] – ափսեն, the cow [ðəˈkau] – կովը և այլն: Երբ գործառույթով **the** որոշիչ հոդը նման է **this** ցուցական դերանվանը<sup>17</sup>: Օրինակ՝ Take **a pen** [վերցրեք գրիչ (ինչ-որ, որևէ, յուրաքանչյուր)], Take **the pen** (վերցրեք այս գրիչը): **The** որոշիչ հոդն ունի ոչ միայն մասնավորեցնող ու առանձնացնող, այլ նաև ընդհանրացնող նշանակություն՝ ցույց տալով հասկացությունը՝ որպես այդպիսին, հասկացությունն ընդհարապես: Որոշիչ հոդը գործածվում է եզակի հաշվելի գոյականների հետ, երբ դրանց ցույց տված առարկաները ներկայացնում են առարկաների ամբողջ խումբ: **The owl** cannot see well in the daylight (Բուն չի կարող լավ տեսնել ցերեկվա լուսին), **The lion** is the king of animals (Առյուծը կենդանիների արքան է): Այլ դեպքերում, երբ խոսքը խումբ ներկայացնող որևէ անհատի մասին է, բայց ոչ ամբողջ խմբի, գործածվում է անորոշ հոդ՝ **A flower** is always a beautiful decoration (Օտղիկը միշտ էլ գեղեցիկ զարդարանք է):

The որոշիչ հոդը գործածվում է. 1) բնության մեջ գոյություն ունեցող, իր տեսակի մեջ մեկ հատ կամ եզակի առարկա ցույց տվող գոյականների հետ. ինչպես՝ the sun – արևը, the moon – լուսինը, the earth – հողը, the world – աշխարհը, the universe – տիեզերքը, 2) աշխարհի չորս կողմերի անունների հետ՝ the North – հյուսիսը, the South – հարավը, the East – արևելքը, the West – արևմուտքը: Սակայն չի գործածվում from East to West – արևելքից-արևմուտք, from North to South – հյուսիսից-հարավ արտահայտություններում, 3) ազ-

<sup>15</sup> Տե՛ս Թոմսոնի Ա., Մասնականացման անգլերենի քերականություն, Ե., 1995, էջ 22:

<sup>16</sup> Տե՛ս Томсон А. Историческая грамматика современного армянского языка г. Тифлиса, Тифлис, 1890, с. 165.

<sup>17</sup> Տե՛ս Swan M. Practical English Usage, Oxford University Press, 1995, p. 64.

գուրջուն ցույց տվող գոյականացված ածականների հետ, երբ դրանք արտահայտում են հավաքականության գաղափարը, ինչպես՝ the British – անգլիացիները, the Armenians – հայերը, the Russians – ռուսները, the French – ֆրանսիացիները, the Italians – իտալացիները և այլն: Բայց՝ **Italians** are often good singers (իտալացիները հաճախ լավ երգիչներ են լինում), 4) գոյականացված ածականների հետ, երբ նրանք ցույց են տալիս մարդկանց խումբ և ոչ թե առանձին անհատներ, ինչպես՝ the rich – հարուստները, the poor – աղքատները, the young – երիտասարդները, the old – ծերերը, 5) ազգանվան հետ, երբ այն դրված է հոգնակի թվով և ցույց է տալիս ամբողջ ընտանիքը՝ the Jacksons – Ջեքսոնները, the Browns – Բրաունները: Եզակի թվով դրված ազգանվան հետ գործածվում է անորոշ հոդը՝ ներկայացնելու ընտանիքի անդամներից մեկին. He is **a Blogg** (Նա Բլոգն է):

Որոշիչ հոդը կիրառվում է հետևյալ աշխարհագրական և այլ հատուկ անունների հետ.

1) գետերի, ծովերի և օվկիանոսների՝ the Rhine – Հռենոսը, the Volga – Վոլգան, the Black Sea – Սև ծովը, the Baltic Sea – Բալթիկ ծովը, the Pacific (ocean) – Խաղաղ օվկիանոսը, the Atlantic (ocean) – Ատլանտյան օվկիանոսը և այլն,

2) լճերի, երբ անունից առաջ չի գործածվում lake «լիճ» բառը՝ the Baikal – Բայկալը, the Sevan – Սևանը, բայց՝ Lake Baikal – Բայկալ լիճ, Lake Sevan – Սևանա լիճ և այլն,

3) լեռնաշղթաների՝ the Alps – Ալպերը, the Urals – Ուրալը, իսկ լեռնագագաթների անունները հոդ չեն ստանում՝ Ararat – Արարատ, Everest – Էվերեստ, Elbrus – Էլբրուս և այլն,

4) կղզիների խմբերի՝ the Bermudes – Բերմուդյան կղզիները, the Philippines – Ֆիլիպինյան կղզիները, սակայն կղզիների անունները գործածվում են առանց հոդի՝ Cyprus – Կիպրոս, Cuba – Կուբա, Si-cily – Սիցիլիա և այլն,

5) թերակղզիների, երբ անվան հետ գործածվում է peninsula «թերակղզի» բառը. ինչպես՝ the Balkan Peninsula – Բալկանյան թերակղզին, the Kola Peninsula – Կոլա թերակղզին, բայց՝ Labrador – Լաբրադոր, Scandinavia – Սկանդինավիա և այլն,

6) անապատների՝ the Sahara – Սահարան, the Gobi – Գոբին, the Karakum – Կարակումը և այլն,

7) ջրանցքների, նեղուցների՝ the Dardanelles – Դարդանելը, the Suez – Սուեզը, the Bosphorus – Բոսֆորը և այլն,

8) թատրոնների, թանգարանների, պատկերասրահների, համերգային դահլիճների, կինոթատրոնների, ակումբների, հյուրանոցների՝ the Coliseum – Կոլիզեյը, the British Museum – Բրիտանական թանգարանը, the National Gallery – Ազգային պատկերասրահը, the Festival

hall – Փառատոնի սրահը, the National Liberal Club – Ազգային ազատական ակումբը, the Hilton Hotel – Հիլթոն հյուրանոցը և այլն,

9) նավերի՝ the Titanic – Տիտանիկը, the Sedov – Սեդովը, the Queen Mary – Մարի թագուհին, և այլն,

10) թերթերի, ամսագրերի՝ the Times – Տամսնակը, the Washington Post – Վաշինգտոն փոստը, the Guardian – Գարդիանը, the Lancet – Լանսետը և այլն:

Անառկայացուցիկ կամ անորոշի քերականական կարգը անգլերենում արտահայտվում է **a** [ei] անորոշ հոդի միջոցով: Այն առաջացել է **one** «մեկ» թվականից: Անորոշ հոդի ընդհանուր նշանակությունն է՝ շատերից մեկը, ոմն, մեկը, ինչ-որ: Օրինակ՝ Give me **a book**. Տո՛ւր ինձ մի գիրք: There is **a mistake** in your translation. Քո թարգմանության մեջ մի սխալ կա:

Անգլերենում **a** [ei] անորոշ հոդը հանդես է գալիս երկու տարբերակով՝ **a** [ə] և **an** [ən]: Ինչպես **the** որոշիչ հոդը, այնպես էլ **a** (**an**) անորոշը նախադասության մեջ չի շեղվում և արտասանվում է հաջորդող բառի հետ միաձույլ: Երբ հոդին հաջորդող բառն սկսվում է բաղաձայնով, գործածվում է **a** տարբերակը, օրինակ՝ **a book** [əˈbʊk] – (մի, ինչ-որ) գիրք, **a spoon** [əˈspuːn] – (մի, ինչ-որ) գդալ, **a fate** [əˈfeɪt] – (մի, ինչ-որ) ճակատագիր և այլն: Անորոշ հոդը հանդես է գալիս **an** [ən] տարբերակով, երբ հոդին հաջորդող բառն սկսվում է ձայնավոր հնչյունով (a, e, i, o, u), օրինակ՝ **an ambassador** [ənˈæmˈbæsədə] – (մի, ոմն) դեսպան, **an entrance** [ənˈentrəns] – (մի, ինչ-որ) մուտք, **an infantry** [ənˈɪnfəntri] – (մի, ինչ-որ) հետևակ և այլն: Սակայն, երբ բառը սկսվում է "h" կամ "u" հնչյուններով, անորոշ հոդը կարող է գործածվել ն՛ a, ն՛ an տարբերակով՝ պայմանավորված այդ բառերի հնչողությամբ<sup>18</sup>, այսպես՝ **an uncle** – (մի, ոմն) քեռի, **a university** – (մի, ինչ-որ) համալսարան, **a home** – (մի, ինչ-որ) տուն, **an hour** – (մի, որևէ) ժամ և այլն: Անգլերենի **a** անորոշ հոդը գործածվում է եզակի թվով գոյականների հետ, առանց մասնավորապես նշելու այս կամ այն անհայտ առարկան: Հոգնակի թվով գոյականների հետ **a** (**an**) անորոշ հոդը չի կիրառվում: Այն սովորաբար չի գործածվում նաև անհաշվելի գոյականների և հատուկ անունների հետ: Որպես կանոն, անորոշ հոդը հայերեն չի թարգմանվում: Այն «իմաստով համապատասխանում է հայերենի մի անորոշ դերանվանը»<sup>19</sup>: Անորոշ հոդի հիմնական իմաստը առարկայի՝ նման առարկաների որևէ խմբի պատկանելին է. This is **a pen** (Մա գրիչ է), Give me **a letter** [Տուր ինձ մի նամակ (և ոչ՝ տետր կամ՝ որևէ առարկա)]: Վերոնշյալ ընդհանուր իմաստից բացի, անորոշ հոդը, գործածվելով վե-

<sup>18</sup> Տե՛ս **Broukal M.** *Toefl grammar flash, USA, 1997, p. 60.*

<sup>19</sup> Տե՛ս **Մխիթարյան Ե.**, *Անգլերենի դասագիրք բուհերի ուսանողների համար, Ե., 2008, էջ 298:*



բացական գոյականների հետ, կարող է արտահայտել նաև մի շարք այլ իմաստներ.

1) գոյականի բառիմաստի փոփոխություն, այսպես՝ work (աշխատանք) – a work (աշխատություն, գործ), silence (լռություն) – a silence (ընդմիջում, դադար), grammar (քերականություն) – a grammar (քերականության ձեռնարկ) և այլն,

2) գոյականի բառիմաստի կոնկրետացում, այսպես՝ There was a **bitterness** in her voice (Նրա ձայնի մեջ ինչ-որ դառնություն կար), A doctor is a **person** who helps people who are ill (Բժիշկը **մի անհատ է**, որ օգնում է հիվանդ մարդկանց):

Գործածվելով նյութ ցույց տվող անհաշվելի գոյականների հետ՝ անորոշ հոդը բառիմաստի փոփոխության միջոցով վերջիններս դարձնում է հաշվելի գոյականներ՝ cheese (պանիր) – a cheese (մի գլուխ պանիր), iron (երկաթ) – an iron (արդուկ), ice (սառույց) – an ice (պաղպաղակ) և այլն: Անորոշ հոդ չեն ստանում news – լուրեր, information – տեղեկատվություն, advice – խորհուրդ, weather – եղանակ, nature – բնություն վերացական գոյականները: Օրինակ՝ He stays indoors in stuffy **weather** (Նա տանն է մնում թաց **եղանակին**), What good **news!** (Ինչ լավ **նորություն է**): Երբ a անորոշ հոդը հանդես է գալիս hundred – հարյուր, thousand – հազար, million – միլիոն բառերից կազմված թվականներից առաջ, արտահայտում է «մեկ» իմաստը.

102- a hundred and two (**մեկ** հարյուր երկու), 1538- a thousand five hundred and thirty-eight (**մեկ** հազար հինգ հարյուր երեսունութ), 1700000- a million seven hundred thousand (**մեկ** միլիոն յոթ հարյուր հազար):

A անորոշ հոդի փոխարեն վերոնշյալ թվականներից առաջ գործածվում է **one** (մեկ) բառը, երբ անհրաժեշտություն է առաջանում շեշտել դրանց ճշգրիտ իմաստը: Անորոշ հոդի փոխարեն **one**-ն գործածվում է նաև **one day** (մեկ օր) կապակցության մեջ<sup>20</sup>:

Ինչպես հայերենին, այնպես էլ անգլերենին բնորոշ է ընդհանուր՝ «անորոշ առում» հասկացությունը, որը որոշակի նյութական արտահայտություն չունի, և պայմանականորեն դրա համար ընդունվում է զրո ցուցիչ, որը կոչվում է «զրո» հոդ: Ընդհանուր առմամբ, հայերենի զրո հոդի կիրառությունը նման է անգլերենի զրո հոդի գործածությանը: Ե՛վ հայերենում, և՛ անգլերենում հոդի բացակայությունը կամ զրո հոդի կիրառությունը չի հանգեցնում գոյականության կորստի, այսինքն՝ գոյականը չի ապագոյականացվում:

Հոդ չի գործածվում՝

1) նյութ և վերացական հասկացություն ցույց տվող անհաշվելի գոյականների հետ, երբ դրանք արտահայտում են ընդհանուր իմաստ՝ life - կյանք, air - օդ, hope - հույս, water - ջուր, milk - կաթ և այլն,

2) հոգնակի հաշվելի գոյականների հետ, երբ համապատասխան

<sup>20</sup> *Sté u Swan M., Walter C. How English works, Oxford, 1997, p. 17.*

եզակի ձևը կունենար անորոշ հոդ՝ **Horses** are animals (**Ձիերը** կենդանիներ են)。  
**A horse** is an animal (**Ձին** կենդանի է),

3) հատուկ անունների հետ, քանի որ հատուկ անունը բավական կոնկրետացված է և կարիք չունի լրացուցիչ ճշգրտման. *ինչպես՝ Ann – Աննա, John – Ջոն և այլն,*

4) ազգակցություն ցույց տվող գոյականների հետ, երբ դրանց հաջորդում է անձնանուն. *ինչպես՝ Aunt Poly – հորաքույր Փոլի, Uncle Tom – քեռի Թոմ, Cousin Jack – զարմիկ Ջեք և այլն: Միևնույն կապակցությունում այլ գոյականների դեպքում գործածվում է որոշիչ հոդ. the boy Dick – տղա Դիքը, the composer Britten – երգահան Բրիթթենը և այլն,*

5) տիտղոս, զինվորական կոչում կամ քաղաքական դիրք ցույց տվող գոյականների հետ, երբ դրանց հաջորդում է անձնանուն. *ինչպես՝ Colonel Brown – գնդապետ Բրաուն, Doctor Smith – դոկտոր Սմիթ, Professor Manson – պրոֆեսոր Մանսոն, President Wilson – նախագահ Վիլսոն, Queen Elizabeth – թագուհի Էլիզաբեթ, Lord Byron – լորդ Բայրոն, Sir William – սըր Ուիլյամ և այլն,*

6) երկրների, երկրամասերի, քաղաքների, գյուղերի անունների հետ. *ինչպես՝ France – Ֆրանսիա, Great Britain – Մեծ Բրիտանիա, California – Կալիֆոռնիա, London – Լոնդոն և այլն: Մակայն որոշ երկրների և երկրամասերի անուններ ավանդաբար ունեն որոշիչ հոդ. օրինակ՝ the United States of America – Ամերիկայի Միացյալ Նահանգներ, the United Kingdom – Միացյալ թագավորություն, the Netherlands – Նիդեռլանդներ, the Caucasus – Կովկաս և այլն,*

7) փողոցների, զբոսայգիների, հրապարակների անունների հետ. *օրինակ՝ Oxford Street – Օքսֆորդ փողոց, Hyde Park – Հայդ զբոսայգի, Trafalgar Square – Թրաֆալգար հրապարակ, Piccadilly Circus – Պիկադիլի կրկես և այլն: Օդանավակայանների և երկաթուղային կայարանների անունների անհոդ գործածության միտում է նկատվում՝ London Airport – Լոնդոնի օդանավակայան, Victoria Station – Վիկտորիա կայարան և այլն,*

8) համալսարանների և քոլեջների անունների հետ՝ *Oxford University – Օքսֆորդ համալսարան, Trinity College – Թրինիթի քոլեջ, բայց՝ the University of London – Լոնդոնի համալսարան,*

9) լեզուների անունների հետ, եթե բացակայում է՝ *language (լեզու) բառը՝ English – անգլերեն, French – ֆրանսերենը, German – գերմաներեն, բայց՝ the English language – անգլերենը, the French language – ֆրանսերենը, the German language – գերմաներենը և այլն,*

10) այն գոյականների հետ, որոնք գործածվում են որպես կոչական՝ *How is my wife, doctor? (Ինչպե՞ս է իմ կինը, բժի՛շկ), What is your name, young man? (Ի՞նչ է քո անունը, երիտասա՛րդ),*

11) օրերի, ամիսների, տարվա եղանակների անունների հետ՝ *on*

Monday – երկուշաբթի, in October – հոկտեմբերին, in winter – ձմռանը և այլն: Սակայն համապատասխան որոշիչ ունենալու դեպքում կամ համապատասխան համատեքստում այս գոյականները գործածվում են անորոշ կամ որոշիչ հոդով՝ We had a **short summer** (**Ամառը կարճ էր**), **The summer of 1985** was very warm (**1985 թվականի ամառը** շատ տաք էր),

12) օրվա մասերի անունների հետ, երբ դրանց կից որպես որոշիչ դրվում են շաբաթվա օրերի անունները և **tomorrow** (վաղը), **yesterday** (երեկ) բառերը՝ She was here **yesterday afternoon** (Նա այստեղ էր երեկ կեսօրին),

13) հիվանդությունների անվանումների հետ՝ pneumonia – թոքաբորբ, influenza (խոսակցական՝ flu) – ջերմություն, scarlet fever – կարմիր (կապույտ) հազ, measles – կարմրուկ և այլն: Որոշ գոյականներ, չլինելով բժշկական տերմիններ, կիրառվում են հիվանդություններ նշելու, ինչպես հետևյալ արտահայտություններում՝ to have a (bad) headache – գլխացավ ունենալ, to have a toothache – ատամնացավ ունենալ, to have a sore throat – բորբոքված կոկորդ ունենալ, to have a heart trouble – սրտի խնդիր ունենալ,

14) որոշ բառակապակցությունների հետ՝ to play football – ֆուտբոլ խաղալ, to play volley-ball – վոլեյբոլ խաղալ, to play hockey – հոկեյ խաղալ, to play cards – թղթախաղ խաղալ և այլն, բայց՝ to play the piano – դաշնամուր(ը) նվագել, to play the violin – ջութակ(ը) նվագել, to play the flute – ֆլեյտա(ն) նվագել և այլն,

15) զգալի թվով տարբեր գոյականների հետ՝ պարագայական նախդրավոր կապացությունների կազմում, օրինակ՝ by train – գնացքով, by plane – ինքնաթիռով, by boat – նավով, by bus – ավտոբուսով, by tram – տրամվայով, by taxi – տաքսիով, by air – օդով, by sea – ծովով, by mail – էլեկտրոնային փոստով, by phone – հեռախոսով, by mistake – սխալներով, by hand – ձեռքով, at hand – ձեռքին, in detail – մանրամասն, in prison – պատճառով, on deck – տախտակամածի վրա, on foot – ոտքին, at sea – ծովին, on business – բիզնեսում, on holiday – հանգստի ժամանակ և այլն,

16) breakfast – նախաճաշ, lunch – ճաշ, dinner – ընթրիք, tea – թեյ գոյականների հետ՝ They met **for dinner** (Նրանք հանդիպեցին ընթրելու նպատակով), They were **at lunch** when I called (Նրանք ճաշում էին, երբ ես գանգահարեցի), **Tea** is at half past four (Թեյը չորս անց կեսին է).

17) **day** – օր, **night** – գիշեր, **morning** – առավոտ, **evening** – երեկո, **afternoon** – կեսօր գոյականների հետ, երբ դրանք նշանակում են օրվա որոշակի մաս և նախադասության մեջ կիրառվում են որպես վերադիր, օրինակ՝ When she awoke it was **morning** (Երբ նա արթնացավ, արդեն առավոտ էր): Հոդ չի գործածվում, երբ morning և evening գոյականներին նախորդում է early (վաղ) կամ late (ուշ) անվանը՝ It

was **late evening** (Արդեն ուշ երեկո էր).

Անգլերենում հոդը ոչ միայն ցույց է տալիս որոշյալ կամ անորոշ լինելը, այլև իբրև միջոց է ծառայում բայը կամ ածականը գոյական դարձնելու. ինչպես՝ **to fire** (կրակել), բայը՝ **a fire** «կրակ», **the fire** (կրակը):

Այսպիսով, ինչպես տեսանք, հայերենում և անգլերենում անկայացման ու անանկայացման քերականական կարգերն արտահայտվում են հոդերի միջոցով: Որոշյալություն/անորոշություն հակադրությունը անգլերենում դրսևորվում է **the/a, an (0) ձևով**, իսկ հայերենում՝ **ը (ն) / Օ (մի)**-ի օգնությամբ: Այս լեզուների հոդերի համակարգերի գուգադրական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ, ընդհանրություններից բացի, դրանք բնորոշվում են մի շարք առանձնահատկություններով ու էական տարբերություններով:

## ОСОБЕННОСТИ ПРОЯВЛЕНИЯ ДЕТЕРМИНАЦИИ В АРМЯНСКОМ И АНГЛИЙСКОМ ЯЗЫКАХ

МЕЛКОНЯН И. М.

Резюме

Армянский и английский языки относятся к индоевропейскому языковому семейству и имеют общую систему артиклей, но при этом они отличаются по ряду признаков – по количеству артиклей, грамматическим категориям артиклей и их использованию. Сравнительный анализ артиклей в армянском и английском языках представляет интерес с точки зрения семантики, морфологии и их использования.

## THE PECULIARITIES OF DETERMINERS IN ARMENIAN AND ENGLISH

I. MELKONYAN

Abstract

The article addresses the comparative analysis of articles and their usage in Armenian and English languages. Although both Armenian and English belong to the Indo-European family of languages and have a general system of articles, besides similarities they also share differences in the number of articles, grammatical categories and in their usage. Hence, the comparative analysis of Armenian and English articles is very interesting from the functional, semantic and morphological points of view.